

02.09.2025 № G 9525

ԵՐԱՇԽԻՔ N EA25/00923

1. Սույն երաշխիքը ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀ ԱՆ ԷԱԾԱՊԶԲ-2026/8/1 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին ԿՈՒՐԱՑԻՈ ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 3,229,380.00 (երեք միլիոն երկու հարյուր քսանինը հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000466 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում Բանկի կողմից Երաշխիքի ելքագրման ամսաթվից, որը նշված է սույն Երաշխիքում և գործում է մինչև 28/02/2026թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի hsargsyan@moh.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին:

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ**ԿԳ ՓՄՁ ԲԻԶՆԵՍԻ ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐ****ՂԱՎԻԹ ՍԱՖԱՐՅԱՆ**

Կատարող՝ Մարթա Մադոյան
Ստորաբաժանում՝ ԲՎԼԲ
Հեռ.՝ +374 10 510 510 (5451)

03.09.2025 № G9594

02/09/2025թ. ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹԻՎ EA25/00923 ԲԱՆԿԱՅԻՆ

ԵՐԱՇԽԻՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Սույնով տեղեկացնում ենք, որ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ԿՈՒՐԱՑԻՈ ՍՊԸ-ին 02/09/2025թ. տրամադրված թիվ EA25/00923 Երաշխիքում (բենեֆիցիար՝ ՀՀ առողջապահության նախարարություն) կատարվում է հետևյալ փոփոխությունը.

Երաշխիք նամակի 2-րդ կետի «3,229,380.00 (երեք միլիոն երկու հարյուր քսանինը հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ» արտահայտությունը փոխարինվում է «4,190,340.00 (չորս միլիոն հարյուր իննսուն հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ»:

Մնացած պայմանները թողնվում են անփոփոխ, ինչպես որ նախատեսված է 02/09/2025թ. տրամադրված թիվ EA25/00923 Երաշխիքի նամակով:

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
ԿԳ ՓՄՁ ԲԻԶՆԵՍԻ ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐ



ԴԱՎԻԹ ՍԱՖԱՐՅԱՆ

Կատարող՝ Մարթա Մադոյան
Ստորաբաժանում՝ ԲՎԼԲ
Հեռ.՝ +374 10 510 510 (5451)